CONCERN-ENERGOMASH

"Concern-Energomash" CJSC
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Azatutyan avenue 26/8, Yerevan 0014, Armenia
0014, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 26/8

Հեռ./Tel.: +374 10 20 97 75, 20 97 77
E-mail: info@c-e.am | www.c-e.am

Արտադրատեսակի անվտանգության մասին ծանուցում

Հայաստանի Հանրապետություն «Ակկու-Չեկ Պերֆորմա» (Accu-Chek Performa)ապրանքանիշով բժշկական սարքավորումներ ներմուծող «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը սույնով տեղեկացնում է «Roche Diabetes Care»(այսուհետ՝Արտադրող) ընկերության հետևյալ ծանուցման մասին.

Ռոշ Դիաբետ Քեյր (այսուհետ՝ «Արտադրող») ընկերությունը իր արտադրանքը պահում է որակի բարձրագույն չափանիշներին համապատասխան և պարտավորվում է ծանուցել արտադրանքի վրա ազդող ցանկացած խնդրի վերաբերյալ: Որպես արտադրանքի որակի վերահսկման և անվտանգության մշտադիտարկման մաս, Արտադրողի կողմից հայտաբերվել է, որ որոշակի սերիական համարներ ունեցող Ակկու-Չեկ Պերֆորմա (Accu-Chek Performa) արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերի մարկոցը կարող է արագորեն լիցքաթափվել կամ ընդհանրապես չմիանալ:

Տվյալ ծանուցումը թողարկելու որոշում է կայացվել, քանի որ Օգտագործողի անվտանգությունը Ընկերության գերակա առաջնահերթությունն է:

«Ակկու-Չեկ Պերֆորմա» Accu-Chek Performa գլյուկոմետրերի արտադրության ընթացքում արտադրողը հայտնաբերել է արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերի ներքին բաղադրիչով պայմանավորված անսարքություն:

Նշված անսարքությունը կարող է վերաբերել ոչ մեծ քանակով ատաղրված սարքերին և վերոնշյալ անսարքությունը կարող է հանգեցնել մարտկոցի արագորեն լիցքաթափմանը:

Արտադրողն արդեն ձեռնարկել է ուղղիչ գործողություններ՝ ապագայում այս անսարքության կրկնությունը կանխելու նպատակով:

Այս ծանուցումը վերաբերում է միայն Ակկու-Չեկ Պերֆորմա (Accu-Chek Performa) արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերին (սերիական համարների միջակայքը **XXX20000000** և **XXX25525056** «XXX»՝ սերիական համարանի առաջին երեք թվերն են):

արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերի ներքին բաղադրիչով պայմանավորված անսարքությունը կարող է հանգեցնել Օգտագործողի կողմից սարքի օգտագործման անհնարինության:

Սա իր հերթին կարող է առաջացնել թերապևտիկ որոշումների ընդունման հետաձգում, որը հնարավոր է հանգեցնի առողջության վատթարացման:

Գործողություններ, որոնք պետք է ձեռնարկվեն Ակկու-Չեկ Պերֆորմա արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքի Օգտագործող կողմից՝

- Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքի սերիական համարը կարելի է գտնել արտադրատեսակի հետևի մասում:
- Մարտկոցի հետ կապված ցանկացած խնդրի լուծելու համար պետք է հետևել օգտագործողի ուղեցույցում նշված հրահանգներին
- Եթե օգտագործողի ուղեցույցում նշված հրահանգները չեն լուծում Ձեր խնդիրը, դիմեք Ակկու-Չեկ տեղեկատվական կենտրոն 00880000000808 կամ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ հեռ.՝ 010 20 17 74, 098 20 17 74 և 044 20 17 74 լրացուցիչ ցուցումներ կամ արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքը ստուգելու համար:

Եթե Ձեր Ակկու-Չեկ Պերֆորմա արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերը վերը նշված սերիական համարների շարքում չեն, ապա կարող եք շարունակել անվտանգ օգտագործել Ձեր սարքը:

Կարևոր տեղեկատվություն՝

Եթե դուք օգտագործում եք Ակկու-Չեկ (Accu-Chek Performa) արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքը, որի սերիական համարը նշված սերիական համարների միջակայքում է **XXX20000000 և XXX25525056** («XXX»՝ սերիական համարանի առաջին երեք թվերն են), հնարավոր է որ այն անսարք է:

Եթե դուք օգտագործում եք նշված միջակայքին պատկանող սերիական համարով սարք, ապա՝

- Միշտ Ձեզ հետ ունեցեք նոր մարտկոց:
- Միշտ Ձեզ հետ ունեցեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափելու այլ տարբերակ :

Այս ծանուցումը վերաբերում է միայն նշված սերիական համարների **Ակկու-Չեկ** (Accu-Chek Performa) արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքերին:Հայաստանի Հանրապետության շուկայում առկա այլ սերիական համարների դեպքում այս ծանուցումը չի տարածվում:

Ռոշ Դիաբետ Քեյր ընկերությունը շնորհակալություն է հայտնում այս կարևոր ծանուցմանը Ձեր կողմից ցուցաբերած ուշադրության համար և հայցում է Ձեր ներողամտությունը Ձեզ պատճառած անհարմարության համար :

Հարգանքով՝

Ռոշ Դիաբետ Քեյր ընկերություն

Թարգմանությունը կատարվել է ՀՀ-ում Ռոշ Դիաբետ Քեյր ընկերության պաշտոնական գործընկեր՝ Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ի կողմից:

Կոմերցիոն տնօրեն _____ Դ. Առաքելյան 15.11.2019